



ՀԱ - 13. 1947

ԽՈՀԵՐ ԿՈՄԻՏԱՍԱՎԱՐԴԱՊԵՏԻՑ

Հայ ժողովրդի զավակները. դուք կարդացեք Մովսես Խորենացի, Նոյիշե, Նարեկացի, Խաչատոր Աբրուլան, Շաֆֆի, Ալիշան, Պեշիկթաշյան և տեսեք, թե ով ենք մենք:

* * *

Այժմ հաճամանքները լավանում են, ժողովրդը պատկվել է և լորջ կերպով ուսման ետևից է գնում, որ միակ փրկությունն է մեր և ապագա կյանքի պատվանդանը:

* * *

Այսպիսի հաճամանքներում, երբ ավելի զորեղ զենք չունենք՝ քան մեր հին ու նոր եկեղեցուն ու աշխարհիկ և գիտական ու գեղարվեստական կարողությունները ցուցադրել, որ տեսնեն, թե իբր ողորմություն չէ որ խնդրում ենք, այլ իբր մարդկային զարգացման զորավայրն ազգ ենք հրապարակ ենում: Երանի թե սկզբեն այս զենքն առնենք. առանք մի զենք որ ավելի զորեղները փշեցին. քայլ մեր ունեցածը՝ անընկրծների և անխորտակելի է՝ հայու սիրուն ու հոգին է իբր զենք շաշում: Լավ է ոչ, քան երբեք: Մանավանդ, երբ հրապարակ է ելուն հայ հանճարը՝ հայ անձերի, կազմակերպիչների, երգողների, նվագողների և խոսդների ձեռքով արդեն զինաթափ են լինում ամեն նախապաշտությներ միանգամայն:

Մենք մեծ մասամբ գավառը կճանշնանք իր տգիտությունով և հետամնացությամբ: Բայց գավառը իմ աչքին առօս կպատկերանա իբր սրբավայրը հայ գեղարվեստի հշխարժերու, իոն կտեսնեմ հայ երգը՝ հայ գեղուկին շրթներու վրա, հայ գոյրանը, հայ գելցուկը՝ իր արորին ու մամկալին հետ, ու քարերն անգամ նվիրականություն մը կը-թիշեցնեն: Այդ քարի բեկորներն են մեր հայրենիքը, իոն են շերտերը մեր գեղարվեստին և ոչ թե մայրաքաղաքներուն մեջ, որիկ մենք գավառը կդիտենք իբր խավարի վայր:

* * *

Մահվան արժանի է այն ժողովուրդը, որ զորիկ է գեղարվեստն, որովհետև ժողովուրդ մը՝ որ գեղարվեստ չունի, կնշանակէ թե զգալու կարողությունը չունի: Եվ ի՞նչ է ժողովուրդ մը՝ որ չի զգար:

* * *

Ինձ համար չկա որիշ երկինք՝ քան իմ ժողովրդի հարազատ հոգին:

* * *

Մեկ հասկացված անկեղծ ձայնը հազար ճառ կարծեն, որովհետև ճառը պետք է մար-

սև հասարակությունը, որ կարենա անկե սևունդ առնել, ինչ որ ժամանակներու գործ է. իսկ ձայնը վայրլյանի մեջ կթափանցե մարդուն կուրծքն ներս և այնուղե կթիմնե զգացման ու մտքի վառարան:

* * *

Հայոց լեզուն ունի իր հասուն հնչավորությունը, որին և համապատասխանող երաժշտություն:

* * *

Խեղին հայ ժողովուրդ, ազգ ես և ինքուտույն այնքան, որքան մյուսները. այդ ոչ կարող է ներքել: Ունին հասուն ուղեղ, կը դատեն: Ունին հասուն մարդարանական կազմ, որով կզատվին այլ ազգերեն ու անոնց կազմեն: Սակայն սիրոտ, որ զգացմանց աղբյուրն է, քուկդ չէ եղել. այլ, մի ինչ որ ասորա-բյուզանդական և հնդկապարսկական է եղել:

* * *

Վաղ պատանեկական օրերես մինչև այսօր, իմ հոգու հսկիչն է ան և իմ ուսուցիչը... Հոգվուս մեջ ամենօրյա արձագանքողը... Աշխատիլ, տքնիլ, պայքարել՝ միայն և միայն ժողովուրդին և մարդկության համար... Ես երբեք չեմ կարող ապրիլ առանց Արովյանի... Ուսանողության ատեն, երբ առաջին անգամ «Վերը Հայաստանին» կարդացի, հոգվուս մեջ այնպիսի ալեկոնություններ զգացի, որ երբեք չեմ մոռնար:

* * *

Հայ երաժշտությունը ոչ միայն մեղի ու տխուր չէ, այլ համակ ուժ է և կենդանություն ու իր մեջ կսնուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց մեջ—կենդանի,—որքան կենդանի է այդ ցեղը, ուժել,—որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը:

* * *

Գեղուկը բնության հարազատ զավակն է. ուստի ճաշակել է բնությունը բովանդակ հոգով ու սրտով: Իր երգերուն մեջ բնությունը կխոսի, որովհետև բնությունն է նախ իր մեջ խոսած: Իր սրտին մեջ բնության ծովը կհուզվի, վասն զի ինքն իսկ բնության ալիքներուն վրա կդեգերի: Իր երգերն իր

կյանքն են, զի իր ամբողջ կյանքը—իր երգերուն մեջ է ներշնչչած: Վերջապես, գեղջուկ երգերը տեսակ-տեսակ ասուն հայելիներ են, որոնք զատ-զատ, իրենց ծնունդ առած վայրերուն դիրքը, կիման, բնությունն ու կյանքը կանդադարձնեն:

* * *

Մեր փրկությունը կուելու կոփելու ենք Փերպուրի (Պետերբուրգի) պարհապնդերու դուներուն առաջ... չպետք է խարվենք Եվրոպայի զանազան խոսումնալից խարկանքներուն. իմանալու ենք և գործնական ճամփա բռնելու՝ ըստ իս առաջին քայլն է բոլոր բոլոր հայությանն ամփոփել ուսուի իշխանության տակ. երկրորդ քայլն է տընտեսական ու քարտյապես. զուս ազգային, առանց օտարին ու մեզ ամսարս գաղտփարներով առաջնորդվելու՝ զարգանա... Երրորդ քայլն արդեն ինքը ուսու հեղափոխությունն է, որ պիտի անե, ոչ թե մենք. իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն:

* * *

Զմայլեցնող երգերը հայ ժողովրդին սեփականություններն են, ոչ թե իմ:

* * *

Հայ ժողովրդական երաժշտությունն ունի երկու գլխավոր ճյուղ՝ արևմտյան և արևելյան: Առաջինին եղանակները լայն են և բարդ, ճյու են և լուրջ, պայծառ են և եռանդուն. երկրորդին՝ սեղմ են և պարզ, աղքատ են և թեթև, դալուկ են և խաղաղ:

* * *

Մեր ժողովրդական և եկեղեցական եղանակները հավասար չափով չեն զարգացած: Առաջինները արտաքին քաղաքական պայմանների ազդեցության տակ ճնշվել, սեղմվել, ամփոփվել են, առանց կորցնելու իրենց խորությունը և արտահայտիչ ուժը: Իսկ երկրորդները, եկեղեցու անձնումների հովանու տակ աճել, ընդլայնվել և զարգացել են:

* * *

Ծինականն այն կախարդ վարպետն է, որ կարդում է հարազատորեն բնությունը, ստեղծում բազմաթերեն մտքեր, նոցա փշում իր հզոր ու պարզ շունչը, դրոշմում է իր բնավորության եկանուկ՝ ներքին և արտաքին լրիվ կյանքով և կնքում է բատերով ու եղանակով իր հարազատ զավակը՝ «Գութաներգը»:

* * *

Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործը, գնացեք և սովորեցեք նրանից:

* * *

Պարն ամենահիմնական նշանակությունն ունեցող երևոյթ մըն է. ամեն գեղարվեստ պարի մեջ կապարտվի: Իբրև շարժում պարը շատ կարևոր դեր ունի ապագա դպրոցական կյանքի գեղարվեստական շարժումի մեջ, վասնզի պետք է գիտնալ, թե ամեն գեղարվեստ,—ինչպես երաժշտություն, քանի դասկագործություն, ճարտարապետություն և այլն,—շարժում է: Ամեն կյանքի մեջ պար կա: Արդեն ամբողջ տիեզերքի կյանքը պար չէ:

* * *

Իրավ է, ես գտել եմ հայ հազերի բանալին և նոյնիսկ կարդում եմ պարզ գրվածքները, բայց դեռ վերջնակետին չեմ հասել, զի յորաքանչյուր խազի խորհրդավոր հմաստին բափանցելու համար, նոյնիսկ տասնյակ ձեռագրեր պրատելով, երբեմն ամիսներ են սահում... Թող հայ հասարակությունը ներդր, մանաւլանդ համբերող ինչի մինչև որ հնարավոր չափով, կատարելապես վերջացնեմ իմ տասնվեցամյակից ավելի տևող տաժանազին ուստմնասիրություններու: Հոյս ունին թե մոտիկ ապագայում, առանձին հատորներով, հասարակության սեփականություն պետք է դառնա:

* * *

Պատմությունը գրեթե լուս է, ոչինչ չէ հաղորդում հայոց եկեղեցական հին եղանակների, ինչպես և խազերի մասին:

Ավանդությունը հայոց եկեղեցական հին եղանակների գրությունը կամ կարգավորությունը, որ ամենայն հավանականությամբ գրեթի գրությունը շրջանի արդյունքն է, վերագրում է ս. Սահակին:

Ե դարում գրեթի գյուտը, ս. Գրքի թարգ-

մանությունը հոգևոր երգեր հառաջ բերին, հետզինեւուն զարգացավ եկեղեցական պաշտամունքն ու ժամերգությունը. հանդես եկան մի շարք եղջեւեր՝ հորինեցին շարականներ, ճառեր, ներքողներ, եկեղեցական, տերության և սրբոց տոների նշանակությունը ժողովրդին բացատրելու նպատակով: Այդ իսկ շարականները գլխավոր չարժանից եղան ուժն ձայն և երկու ստեղի եղանակների հառաջ գալուն, ըստ Յայսմափորքի ս. Սահակի ձեռքով. պատասխան սաղմուերգությունը տեղի տվեց շարականի եղանակներին:

* * *

Շարականների բովանդակությունը շատ հարուստ է. արտահայտում են կրոնական գագամունք: Բովանդակության գլխավոր մասերն ա. Բավարի եկան մասը, բ. Քրիստոսի տօնօրինությունները, գ. եկեղեցու խորհրդները, դ. ս. Գրքից կտորներ, որոնք լուսարանում են Քրիստոսի տօնօրենությանց որևէ գաղափարը, և ե. սրբերը, որոնք նըւպատեցին քրիստոնեական ճշմարիտ լուս տարածման: Այսպիսի բազմակողմանի բշվանդակություն ունեցող բանաստեղծական մի ս. Գրքը, անշուշտ պետք է, որ ունենար և բազմապիսի եղանակ, համապատասխան կրոնական գագամունքին:

* * *

Ես պիտի հասնիմ իմ բուն նպատակին—մեր հայ ժողովրդական երաժշտության գանձերը դուրս պիտի բերեմ հայուննի ավերակներնեն....:

* * *

Ես տարիներու աշխատանքով շիներ եմ իմ ուղեգիծը, որին ընթացեր եմ մինչև ցարդ և պիտի ընթանամ ասկե ետքն ալ, որքան ատեն որ ուժ զգամ երակներու մեջ. ոչ մեկ խոշնդոտ չի կրնար կանցնել զիս իմ առաքելության մեջ. որուն նվիրականությանը համոզված եմ ես բոլոր սրտով:

